



ՏՆՕՐԷՆ-ԽՄԲԱԳԻՐ Վ. ՓԱՓԱԶԵԱՆ

ԺԲ. ՏԱՐԻ ԹԻԻ 42

ՀԱՐԱՐԱԹ

14 ՅՈՒՆԻՍ 1908

ԱՌԱՋՆԱԿԱՐԳ ԿԱՄԱՑՈՂՈՒՄ

ՀԱՆՐԱՊԵՏ

ԿԳՂՑԵՍՏՈՂՈՒՄ ԵՂԻՊՈՂՏՈՒՄ

ՄԻԱԿ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ

Գ. ՍԱՐԳԻՍՈՑ ԵՒ ԸՆԿ


Պաշտօն-Պարտ, Օռնդտի-Պաք հաստատութեան դէմ, Թիւ. 16

Հատոր 40 փաթա

(T. آسادریان) شرکت صنیعہ مطبعہ سی — باب عالی جاده سنده نومبر ۰۲

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Յ. ԱՍՏՏՈՒՐԵԱՆ

Կ. Պոլիս, Պապը-Այի մասսէսի քիւ 52



Անկարելի է որ ընտանիք մը առանց կարի մեքենայի մնայ : Եայն էական կէտն է լաւ մեքենայ մը ունենալ , որովհետեւ լաւ մեքենայ մը անթիւ և անհամար ծառայութիւններ կը մատուցանէ : մինչդեռ գէշ տեսակէ մեքենայ մը անվերջ դժգոհութեանց են փողատելի աղբիւր մըն է :

Բոլոր աշխարհ գիտէ թէ՛

Ս Ի Ն Կ Ե Ռ

ՀԱՅՐԱՅՈՒՆ ԿԱՅԺ. ՊԱԼԱՏԱՆ

THE SINGER

MANUFACTURING COMPANY



[Ձեռքի, ոտի ու ոտի եւ ձեռքի
փանգամալն մեքենաներ
կը գտնուին

մեքենան լաւագոյն է. այն մեքենան ամենէն կտարի լողորձածը,
հաստատունը եւ դիւրագործելին ըլլալուն բովանդակ աշխարհի

մէջ՝ ամէն մարդ Սինկերի մեքենան կը գտնէ :

ՍԻՆԿԵՐԻ մեքենաները կը ծախսին մի միայն Սինկեր Ընկերութեան վաճառատանց մէջ :

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՄԱՍՆԱՎԱՅՐՈՒՄՆԵՐ

ԲՆՐԱ

- (1. Մեծ փողոց, Պօն Մարշէի դէմ, թիւ 343 եւ 343 կրկին :
- (2. Մեծ փողոց, Կալաթա Սէրայի խաչին դէմ.

ԿԱԼԱՏԱ

- (1. Սինկեր խան, Թիւնէլի ետեւը.
- (2. Գարաքէօյ, Թրամվէյի կայարանին դէմ.

ՊԱԼԱՏ

- (1. Սուլթան համամ .
- (2. Սուլթան Պէյազիւ, Թրամվէյի կայարանին դէմ, թիւ 13 .

ՍԵԿԵՍՏ

Գարշը Պօլս , թիւ 120 .

Կատարեալ երաւեստութիւն

Մասնաձեռն գաւառներու քաղաք խաղաղներու մեջ

Սինկերի Ընկերութեան Կեդր. վարչատեղին կը գտնուի Բերա, Մեծ փողոց, թիւ 343 եւ 343 կրկին, Տիւզդուլուի տունը :



ԱՐԵՒԵԼ Ք ՕՐԱ-

ԹԵՐԻ աղցային, գրական եւ ֆադախական :
— Բաժանորդագրութիւն՝ տարեկան 4. Պոլ-
սոյ համար 80 դրշ. վեցամսեայ 45 դրշ. դա-
ւառները համար տարեկան 108 դրշ. վեց-
ամսեայ 80 դրշ. և օտար երկիրներու համար
տարեկան 35 ֆր. վեցամսեայ 20 ֆր. Զեռքէ
վաճառում՝ քաղք փառա : **ԱՐԵՒԵԼ Ք**
հրա լարակ կ'ելլէ ամէն օր, կէս օրին, իւր-
նասեալ բովանդակութեամբ, ընտիր յօդուած-
ներով, թարմ լուրերով ու նորագոյն տեղե-
կութիւններով :

ԱՐԵՒԵԼ Ք, իր վերակազմուած խըմ-
բագրութեամբ և իր կարող աշխատակիցնե-

րով, առաջնակարգ տեղ մը կը գրաւէ տե-
ղական հայ մամուլին մէջ :

Իր առաւելութիւններէն մէկն է **ՊԱՏ-**
ԿԵՐԱՅԱՐԴ ըլլալու հանգամանքը, որով էր
ընթերցողներուն կը ներկայացնէ պարբերա-
բար : Ծանօթ Իէմքեր և Երբեմն ալ տեսա-
բաններ : Ոչ նուազ կը գնահատուին իր մա-
նագրողական յօդուածները, եկեղեցական,
կրօնական, անտեսական-տեղանաւորական,
երկրագործական, իրաւաբանական եւ այլն,
բացի գրական, բանասիրական գրուածքնե-
րէ, օրուան տեսութիւններէ ետային :

ԱՐԵՒԵԼ Քի վերաբերեալ ամէն գրութիւն
ու բաժանորդագրութեանց է ուղղել **Տէր և**
Տնօրէն Գարեգին Է. Ֆ. Պօլսահանի հասցէին,
Ղալաթիա, Մահմուտիէ Զատաթի, ուր հա-
տառուած են թերթին ապարանն ու խըմ-
բագրատունը :



ՏՆՕՐԷՆ-ԽՄԲԱԳԻՐ — ՎԱՀԱՆ ՓԱՓԱԶԵԱՆ

ԺԲ. ՏԱՐԻ ԹԻԻ 42

ՇԱՐԱԹ

14 ՅՈՒՆԻՍ 1908



ՎՍԵՄ. ՆՇԱՆ ԷՑ. ԳԱԶԱՆԵԱՆ

Մ Ա Հ

ՎՍԵՄ. ՆՇԱՆ ԷՖԵՆՏԻ ԳԱԶԱԶԵԱՆԻ

Պարզ անհասի մը սուգը չէ զոր կողքայ այսօր համայնքը, Վսեմ. Նշան ԷՖ. Գազազեանի ինքնազոհեցիկ մահը եւ անոր առքած ցար ընդհանուր է, որովհետեւ ինքը, քեւ ազնուաստնմ գերդաստանի շառաւիղ, սակայն հայրն էր աղփասին, նեցուկը կարօթն եւ պաշտպանը սնանկին:

Իր մահը եւ անոր ցար անմխիթար եւ անմոռաց պիտի մնայ ամեն անոնց արտերուն մեջ՝ որոնք նիւթապէս եւ քէ բարոյապէս կօզսուէին անկէ: Մահեր կան՝ որոնք ընտանիք մը կը ձգեն իրենց ետին, իսկ մահեր ալ կան՝ որոնք ընտանիքներ կը բողոն անեւ անտիպական, որպիսի է Վսեմ. Նշան ԷՖ. Էնէնի մահը:

Իր կենդանութեանը կարծես հաճոյք կզգար, քառուած աշխարհային ժողովն եւ աղմկալից անտեսական ասպարէզէն, զբաղիլ բարիքով, լսել բոլոր իրեն դիմող կարօթները եւ օգնել անոնց, ահա իր ազնիւ զբաղումը, ահա իր մարդասէր զգացումը, ուր վերջացուց իր այնքան օրինակելի կեանքը եւ աւանդեց հոգին:

Իր կարեւոր կտակները բարեգործական ձեռնարկներու համար կուզան անգամ մ'ալ շեշտել սա նշանակութիւնը քէ՝ Վսեմ. Նշան ԷՖ. ոչ քէ միայն իր կենդանութեանը, այլ՝ մահուանէն վերջն ալ ուզած է պահել իր հոգուն համար աղօթողներու ստուար քիւ մը, ոչ քէ միայն ներկան՝ այլ ապագան ալ մտածող բարի Գրիստեանի մը պէս:

Յուշարկաւորութեան ժողով արարողութիւնը կատարուեցաւ Յունիս 7 Շաբաթ առաւօտ, Բերա, Ս. Երրորդութիւն եկեղեցին, Նախագահութեամբ Ամեն. Ս. Պատրիարք Զօր, իր շուրջը ունենալով՝ Տ. Գրիգորիս, Տ. Վահրամ, Տ. Գեորգ եւ Տ. Մկրտիչ Արքեպիսկոպոսները, Տ. Հմայեակ եւ Տ. Գաբրիէլ Եպիսկոպոսները, բազմաքիւ Վարդապետներ, Քահանաներ եւ դպիրներ:

Համակ լուսազարդ Տաճարին մեջեղ կը կենար մահաբեմի մը վրայ պսակազարդ դագապը, իսկ եկեղեցին լեցուն էր՝ Հայ եւ օտարազգի բարձրաստիճան անձնաւորութիւններով:

Մեռելական արարողութիւններէն վերջ՝ Սրբազան Նախագահը բեմ ելլալով՝ ինքնազոհեցիկ ռնով եւ բացատրութեամբ մը դուռափէր քաւ մեծանուն բարեհաւիտ, եւ բուեց բոլոր այն օրինակելի կտակներ՝ զորս քաւ է բարեսիրտքը:

Դամբանականէն վերջ դագապը՝ որուն ծոպերը եւ կերակուրները կը կրէին ծանօթ անձնաւորութիւններ, հանդիսաւոր քափորով պաշտօնադրուեցաւ եկեղեցւոյ դուռը, ուրկէ նոյն հանդիսաւորութեամբ մեռելական քառածի կառնով մը տարուեցաւ մինչեւ Ս. Յարութիւն եկեղեցին, ուր վերջին աղօթքներ արտասանուելէ վերջ՝ փոխադրուեցաւ Շիւրի Ազգ. Գերեզմանատունը, մարմինը ամփոփուելու համար ընտանիքին յատուկ դամբարանին մէջ:

ՀԱՆՐԱԳԻՏԱԿ՝ ինքն ալ իր խորին ցաւակցութիւնը կը բերէ կցել ընդհանուր սուգին, զոր կողքայ այսօր Գազազեան բարեհաւիտ գերդաստանը եւ պարագաները, իրենց վիճակած այս դառն կորստեան առթիւ:

ՄԻՆԿԱՐՈՒՐԵՆ ՓԵՍԱՑՈՒ

ՊԱՐՁ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

(Շար. Յախորդ քիւեց)



Պարոն Մաքլուժի անակնկալ այցելութիւնը ակեկոծութիւն մը դրաւ Մելքոն աղայի պարզ հոգիին մէջ:

Միլիոններու տէր երիտասարդ մը, — ինչ ալ չնորհօքով մարդ, — ոտքովը եկած ինկած էր որոգայթին մէջ, և մեր մանածի վաճառականը շատ ապուշ պիտի ըլլար թող տալու համար որ այդ ոսկեճամուկ առիթը խոյս տայ իր ձեռքերէն:

Փողոցի մը անկիւնը յատկապէս տնկուած խոշոր քարի մը վրայ վայրկեանի մը համար իր կռակի բեռը հանգչեցնող բեռնակրի մը պէս՝ լայն շունչ մը առաւ այդ շուկայի մարդուկը, և նամակը երկու անգամ եւս կարդալէ վերջ սկսաւ երպզել:

Թորոս աղան իրաւունք ունէր. — խըսէիքէն անդին բան մը չէր ըլլար, — և ասիկայ բաղդ մը չէր իրեն համար որ մինչեւ Մինկաբուրներէն ատանկ պատուական փեռացու մը կը ներկայանար իրեն:

Միախոտէն դեղնած մատներովը սիւսուէթ մը սկսաւ ոլորել, և այդ գործողութեան պահուն իր դէմը կանգնած տեսաւ Պիտտոսը, ճերմակ հարսանեկան չրջագետի մը մէջ, հարսնեւորներ, խրախճանք, ուրախութիւն, կնոջը ժպտագին դէմքը, փեսին յաղթապան շարժումները, աչքին առջեւ բերաւ Սինկաբուրը, Հնդկաստանը, անգլիական ոսկիները, շոգենաւները, սեւ, դեղին մարդերու ամբոխը, աղջկանը հոյակապ չէնքը, անհամար ծառաները, երբեմն երբեմն հոնկէ գալիք թանկագին ընծաները, որոնց փոխարէն ինքն ալ հոստեղէն տարին մէկ երկու անգամ աղջկանը պիտի ղրկէր, կանանչ ձիթապտուղ, ֆափառի խալեար, պասեմ պէտքէյի, պուզլու խալխա, տեսակ տեսակ անուշներ, բուրուցն, ֆիթեկ, ճազլը, աղան խալուցի, տուփերով թուզ և չամիչ պիտի ղրկէր, և բոլոր այն բաները՝ որ հոնքեղ չէն գտնուիր և զորս շատ կը սիրէ Պիտտոսը:

Եւ իրեն այդ երազը իրականութեան ձեւ կառնէր ամէն անգամ որ այդ նամակին վրայ կը պտտցնէր իր շաքարախտէ տկարացած աչքերը: Այդ բոլոր երազուած երանութիւններու զգացումին հետ, նախանձը և ժլատութիւնը տուն տուն իրեն չրջահայեցութեամբ շարժելու և ապահով ըլլալու համար որ ուրիշները իր ձեռքէն չի խլեն այդ չնաշխարհիկ փեսայուն, և իր խանութպանի ուղորմուկ: Բնագրէն մղուած, իր գրագրին դարձաւ, և պատուիրեց անոր. — ինծի նայէ՛, Ստեփան, ան մարդը ո՞վ էր տէր հարցնեն ցե, չեմ գիտեր, չեմ ճանչնար ըսես հա՛:

Տեղացիները հոտ առնելու չէին, ապա թէ ոչ անպատճառ խօսք կը խառնէին, և թերեւս խլէին իր ձեռքէն այդ ինքնամատոյց փեսայուն: Այլ եւս չի կրցաւ խանութը կենալ: Այդ լուրը ժամ առաջ կնոջը և աղջիկներուն հաղորդելու փափաքը, մոռցնել տուաւ իրեն գործ, խանութ, վաճառում, յաճախորդ և դրամ, և կէս օրը երկու ժամ անցած պատրուակ մը ստեղծեց միջոց մը տուն վազելու:

— Ես պանքան կերթամ կոր, ըսաւ, սա հաթէ մը կուգամ, քիւաք ըրէ, Մանուր գայնէ թող սպասէ՛, դուն ալքնսըմիւս ըրէ, ես ուր է նէ կուգամ կոր:

Եւ բօսթան նամակ մը հասցնել ուղողի մը փութկոտութեամբ՝ ամէնէն կարճ ճամբաներէ տուն վազեց:

— Վախճամ կեցն ումուզիդ ցաւը պրոնեց, աս ատենս ընտո՞ր եղաւ տէ եկար, ըսաւ կինը փողոցին դուռը բանալով:

Առանց բան մը պատասխանելու՝ բակին աջ կողմը դրուած քանաքէին վրայ նետուեցաւ, և գրպանէն նամակը հանելով կնոջը երկնցուց:

— Մուքլախ Իսկուհիցայէն է, մէջը պա՛ն մը կայ:

— Կարդա՛, կարդա՛:

Այդ միջոցին երկու աղջիկները մէկը խոհանոցէն՝ միւսը վերէն, բակը խոյացան և չրջապատեցին հայրիկին:

Էլպիսը քովի յոյներուն տունը գացած ըլլալուն, չի կրցաւ ներկայ գտնուիլ այդ ընտանեկան արտասովոր հաւաքումին:

— Նա, քա՛, Ագապի, կարդա նայինք:

— Մեր Իսկուհիցային գիրը չէ, մամա, աս ուրիշ գիր է:

— Ինչ է նէ, կարդա նայինք:

Եւ Ագապի սկսաւ բարձրաձայն կարդալ Բեթրաքիի նամակը:

Ընթերցումը չաւարտած Պիստոս վայրի խաչխաչի մը պէս կաս կարմիր կտրած էր և ինքզինքին contenance մը տալու համար իր վեր սոթթած թեւերը վար առնել սկսաւ:

— Իրա՛ւ, քա՛, Մեկքոն աղա, ատ մարդը եկա՛ւ, հարցուց կինը:

— Հիմայ խանութն էր:

— Ընտո՞ր մարդ է:

— Մատը մատնի մը կայ քի, ճուրին մէջ հինգ հարիւր լիրայ կընէ, վրան գլոխը չընորհքով, էրկան ռաբխա, լօրտի պէս տղայ մը, սարքի վրայ, երկայն պոյլը:

— Էյ տեսնուեցա՞ք պարեմ:

— Կէս սահաք մը նստաւ, ամա ատ բանին վրայ հիշ լախըսք չեղաւ:

— Քեօֆի հոն ըլլայի, մեզի հրամէ չըսիր:

— Պիտի ըսէի ամա, ան ինծի կերակուրի տակէք ըրաւ, վաղը գիշեր:

— Հիշ արիւթիւն չունիս. ատանկ մարդերու ետխան թող կուտան: Իօքե աս գիշեր կեւլայ Աղանուրենց կերթայ, անոնք ալ Մալվինան կը ցուցունեն, ինչ կըլլայ ինչ չըլլար, ընտոր ընենք քի ...:

— Մայրիկ, վրայ բերաւ Պիստոս, հայրիկը թող երթայ լօխնքան մարդը առնէ sk Բրամէրին տանի, մենք ալ անցնելու պէս ընենք:

— Մաղազան ընտոր ընենք. քանի մը Տէնիզլիի միւթքերիներ իջեր են, մուքլախ մեզի կուգան, հիմայ ալ կլոխ քերելու ատեն չունիմ:

— Կայնեցէք, քա, դուն այս իրիկուան ուշ ատեն հոնկէ կանցնիս, կըսես քի մատամս ձեզի տեսնալ կուզէ կոր, Բեթրաքիին վրայ պան պիտի հարցնէ, վաղը գիշեր կերակուրի հրամեցէք. հէմ ասանկ տախ ալաֆրանկա կըլլայ, մուքլախ քաբեզ մը կուզէ:

— Երկան պարակ պաներ կը հանես դուն ալ:

— Բեզի հազար անգամ ըսեր եմ քի,

դուն ասանկ պաներու մի խառնուիր, ես ինչ կըսեմ նէ դուն ան ըրէ:

— Անանկ է նէ ես այս իրիկուն կերթամ:

— Հայրիկ, նոր սափօք հագիր հա՛:

— Ես ետքէն տղան կը ղրկեմ տուէք, սըտեղէն ճուր մը տուր:

Պիստոս կը վազէ և գաւաթ մը լեցնելով կը բերէ:

— Նա հայրիկ, աղւորիկ հայրիկա, սիրեմ, կայնէ մէյմը պագնեմ քեզի:

— Ատեն չունիմ, ես կերթամ կոր:

— Տղան ղրկելու չի մոռնաս, կը պատուիրէ Պիստոս, և հայրը դուրս ելլալուն պէս քովի տունը կը վազէ Էլպիսը կանչելու:

— Միսաֆիր եկա՛ւ:

— Օ՛խ եա՛, օ՛խ եա՛, իշտէ նա, ես Սինկարուր կերթամ կոր:

— Ի՛նչ:

— Կը տեսնաս, ներս երթանք տէ մամային հարցուր:

— Հա՛ քա, մամա:

— Կայնեցէք նայինք, ինքզինքնուդ հարս մ'ըլլաք:

Եւ մայր ու աղջիկ եղելութիւնը տեղն ի տեղօքը կը բացատրեն Էլպիսի, որ մէյմը ժօրը կընայի և մէյ մ'ալ քորշը՝ հաւատալիքը չի գալու ձեռով:

— Շախա կընէք կո՞ր:

— Ձաքը դուն իմ աղէկութիւնս չես ուզեր քի, քիւթիւն չես հաւատար, նա իշտէ, Բեթրաքիին գրեր է, կարդա՛:

Եւ Էլպիս պատուհանին մօտենալով կը կարդայ նամակը, և հեռուէն դիտող մը պիտի տեսնար որ ամէն մէկ տողին երեսին գոյնը կարմիրէ կապոյտի կը փոխուէին և կապոյտէն կարմիր:

— Հասկցա՞ր հիմա:

— Ձեռքէդ առնող չիկայ, մի վախնար զէ՛վզէ՛կ ...

— Մի՛ պաւլայեօ կէնէ, կը պատուիրէ մայրը:

Պիստոս որ շատ դիւրազգած և շատ ալ բարի աղջիկ մըն է, քիչ մը յուզմունքէն, և քիչ մը ուրախութենէն, և քիչ մը ալ քորշը նախանձոտ վերաբերումէն զգածուած, աթուր մը վրայ կիյնայ և գոգնոյի փէշերը

աչքերուն տանելով անուշ անուշ արցունքներ կը թափէ հեծկտալով :

— Հայտե՛ք, քա, կէնէ դուն քովի տունը գնա, սիրտ խաղէ՞ր զատ պաշխա պան չիկայ քի :

— Հիմայ ես իրեն բան մը ըրի՞. չէ՛, քա մամա, քեզնէն կուլայ կոր, գիտցաւ քի, հէմէն հարս եղաւ, նա՛ մի վախնար, ձեռքէդ առնող չիկայ, Սինկարուր գացողները տեսանք . . . :

— Պիտի երթամ, պիտի երթամ, պիտի երթամ, կը կրկնէ Պիստոս, աչքերուն արցունքները ձեռքին կռակովը սրբելով և ինքզինքը դուրս կը նետէ սենեակէն :

— Ոչ ու փուճ ըլլաս հեմէն, հա՛, կը բացագանչէ մայրը էլպիսին, ինչ տէյի աղջին սիրտը խաղցուցիր :

— Ձաթը դուն ամէն ատեն անոր քառաձկնուս, ե՛ս ինչ ըսի իրեն քի . . . :

— Չեմ գիտեր, հայտէ եկած տեղդ գնա : Մինչ տանը մէջ այս սովորական տեսարանը տեղի կունենար, և մաղազան Մելքոն աղան յաճախորդներուն հետ կը պարապէր, պարոն Արզար Մազլում Անգլիական Հիւպատոսին գացած էր տեղւոյն վաճառականութեան վերայ տեղեկութիւններ առնելու :

Վերադարձին օթելին դրան առջեւ գտաւ մեր Մելքոն աղան, որ ժամէ մը աւելի հոն կսպասէր իրեն :

— Օ՛, բարի եկաք, պարոն, պարոն . . . կը ներէք որ չեմ յիշեր ձեր անունը :

— Մելքոն աղա :

— Այո՛, պարոն Մելքոն, բարի եկաք :

— Բարի տեսանք, ինչպէ՞ս էք :

— Լա՛ւ, շատ լաւ, շնորհակալ եմ, ներս չէ՞ք գար :

— Մէրսի, գործ ունիմ, ուրիշ ատեն, մինակ պիտի ըսէի քի Մատամ բարեւ ըրաւ, ձեզի կուղէ կոր, մեր Բեթրաքին վրայ լուր պիտի հարցնէ եղեր, ինչ խքսար քի զահմէք է նէ, վաղը գիշեր կերակուրի մեզի հրամանեցէք :

— Բայց դուք պիտի գայիք ինծի :

— Ինծի համար քիչ մը զօր է գիշերները դուրս ելլալ, բայց պատիւ է ինծի համար որ դուք մեզի հրամայէիք :

— Բարի, բարի, քանի որ տիկինը ծա-

ռայութիւն մը կը խնդրէ ինձմէ, միայն ձեր տունը կուղէի գիտնալ :

— Խօլայ է, ես սահալքը եօթին կուգամ հոս մեկտեղ կերթանք :

— Մենձ պաներ չունինք, սանկ մենք մեզի . . . :

— Օ՛հ, խնդիր չէ, պարոն, խնդրեմ :

— Ըսել է պիտի գաք :

— Դանի որ տիկինը կը պահանջէ, ամենայն սիրով :

— Մնաք բարով, ես ճիշտ եօթին կուգամ :

— Խիստ բարի, երթաք բարեաւ :

(Մնացեալը գալ շաբթու)

Յ. Ա. Գ. Ա. Գ.

ՄՈՒՐԸ ՀԱԿՏԻԴ

Ա. ՄԱՄՈՒԼԻ Պ. Յ. Ա. ԻԳ

Այն օրէն ի վեր երբ քեզի պէս խլրոտ proprement dit յօդուածագիրներ սկսան ուղղել մեր գրականութիւնը, լաւ սեպեցինք կարգալու արժանի գրութիւնները արտատրպել, քան թէ ձեզ պէսներուն լափափինք ընել remplissage ընել թերթերը, Մինջեի իՍԿ . . . Արեւելեան Մամուլի պէս չարութաթերթի մը աշխատակիցները մերժելով, ընդ որս և . . . դուք՝ միւսիւ Պ. Յ. Ա. :

ՀԱՆՐԱԳԻՏԱԿ

Յ. Գ. — Եթէ Մամուրեան Որդի առնուի մեր այս կճուկէն je m'enf. . . պաշտօնակցի փոխադարձ կենցաղագէտ զգացումը՝ եթէ կրէր, չպիտի ուզէր տեղ տալ միւսիւ Պ. Յ. Ա. ի չարակամ սողերուն, նկատի առնելով մեր այնքան ջերմ շնորհաւորութիւնները իր բացառիկ Ա. Բ. պրակներուն առթիւ :

Բայց դո՛ւք խաղեքանքներդ, ասանկ էք, ձեր սիրտը նախանձու խմորով չաղվուած է, allez !

Նոյն

ԿԱՎՌՕՇԱՊԱՏՈՒՄ

ՏԱՐԻՆ ԴԷՄ

(Սմառնային ժամբեզի)

Կարծես, տաքերը սկսան:

— Կարծես աւելորդ է ... պիտի ըսեն մեր փողոցին չորքոտանիները, որոնց լեզուները կէս-կէս կանգուն դուրս են ինկած, բաւական է որ մինչեւ այս յօդուածիս հրատարակուած օրը ... օդը չփոխուի:

Որովհետեւ, օդերու վրայ հիմնուած յօդուածներու պէս ապուշ բան չկայ:

Օրինակի համար, յօդուածիդ մէջ քանի տաքութեան վրայ կը խօսիս և ընթերցողդ երբ կարդայ յօդուածդ՝ չմտելու համար նոր նոր ֆանէլա մը եւս հագած կ'ըլլայ, կամ օդին պաղութեան վրայ կը ճառես, և նոյն ընթերցողդ այդ օրը տաքին սաստկութենէն ֆանէլան հանած կ'ըլլայ կոնակէն:

Ահա՛ թէ ինչո՞ւ կը յանձնարարեմ այժմէական քրոնիկագիրներուն՝ ուղածնո՛ւն չափ ճառել մայիսի, յունիսի, յուլիսի, սեպտեմբերի ու դեկտեմբերի վրայ, Թայք կարելի եղածին չափ զգուշանալ օդին վրայ գրելէ, վասն զի այդ բանը կրնայ մարդը ... խոյտառակել:

Աւա՛ղ, օդին վրայ հիմնուած յօդուածները յաճախ ... օդային չեն ըլլար:

×

Ամէն պարագայի մէջ սակայն, կարծեմ... տաքերը սկսան:

Քանի մը ամիս առաջ ամոռիսին օրան սուղ էր, հիմա ձիւնին օրան սուղցաւ:

Այն ատենները ամիսալստաններուն երեսը կը խնդար, հիմա՝ սառուցանաճառները կը մարին կոր ինդալէ:

— Է՞՛՛՛՛՛, ա՛յս ցուրտը ... կ'ըսէինք երկու ամիս առաջ:

— Է՞՛՛՛՛՛, այս տա՛քը ... կ'ըսենք կէր հիմա:

Եթէ կարելի ըլլայ՝ մարդիկ մէյմէկ պաղպաղակի տուփերու մէջ պիտի մտնեն նստին:

Լսածիս համաձայն, այս տարուան ամա-

ռը ա՛յնչափ սաստիկ պիտի ըլլայ, որչափ... առջի տարուան ձմեռը:

— Աս տաքին դէմ ի՛նչ պիտի ընենք ... կը հարցնեն բարեկամներս հիմակուց:

Բարեկամներս տաքէն ազատելու վսեմ դիտումով հետեւեալ դեղագիրը պատրաստեցի, զոր կը յղեմ Հանրադիսակի իւրաքանչիւր ընթերցողներուն:

×

Տաքին դէմ պատմապարուելու համար կը յանձնարարեմ որ երթաք մէյմէկ սենեակ վարձել ... Պաղ Օդի մթերանոցներու մէջ:

Այս կերպով կրնաք վստա՛ք ըլլալ որ բաւական առեն ... չէք հոգիր:

Այս օրերս ... տաք վիճարանութիւններ մի՛ ընէք և ջանացէ՛ք միշտ ... պաղ-զաւակ մարդոց ընկերակցութեան մէջ ապրիլ:

Ձեր նամակներուն մէջ կարելի եղածին չափ քիչ ղրկեցէ՛ք ասոր անոր ձեր ... ջերմագին բարեհաճութիւններ:

Կրցածնուդ չափ ... պաղ խօսքեր ըրէ՛ք, ասիկա չէք գիտեր ի՛նչ ... պաղութիւն առաջ կը բերէ ձեր շուրջը:

Խիստ պաղ բան մը ըրած ըլլալու համար ... սալօնի մը մէջ կեցած տեղերնիդ աղջկան մը ճակատը համբուրեցէ՛ք:

Շա՛տ մը ձմեռ... ուկ կերէ՛ք:

«Տաք» բառին հետ ամենեւին յարաբերութիւն չունենալու համար, ձեր հին ու նոր պարտքերը մի՛ ... տաք:

Շատ մի՛ նայիք ... ջերմաչափին, քանի որ այն բառն ալ իր մէջ «ջերմ» ունի, և երբ տենդ ունենաք, ջանացէ՛ք ... ջերմ չունենալ:

Ջանացէ՛ք կարելի եղածին չափ ... պաղաբիւն ըլլալ:

Այս տաքին զգուշացէ՛ք ... «տա՛ք» աղջուկներ թափել, ու եւ է մէկու վրայ:

Ջերմագին համբոյրներն ալ լաւ չեն. ա-

մառը պաղ համբոյրները աւելի յանձնարարելի են:

Ձեր գործին մէջ նայեցէ՛ք նաեւ ... քաղ չերթալ:

Ձեռքերնէդ եկածին չափ ... պաղ առէ՛ք: Այս բանը մարդը կը զովացնէ:

Զովանալու պղէկ միջոց փըն է նաեւ ... փրուհիէն պաղիլը:

Ամառուան նոյս օսաստիկ տաք օդերուն, շատ աղէկ բաներ չեն ... շանթահարի խօսքերը, կայծակնաւոր ակնարկները եւայլն:

Ձեր բոլոր տաք խօսքերը ձմրան պահեցէ՛ք և սպառեցէ՛ք բոլոր ա՛յն խօսքերը, որոնք կարելի եղածին չափ պաղ երկիրներէ գաղթած ըլլան:

Ձերմագիւն ... գիրկընդխառնումները ձմրան միայն պահեցէ՛ք:

Ամառն անոն իրր գովացուցիչ կրնայ յանձնարարուիլ Հիւսիսային Բեռնի ճամբորդական վէպերու ընթերցումը:

Ու քանի որ խօսքը ընթերցումին երկու յունիս, յուլիս և օգոստոս ամիսներուն մէջ ջանացէ՛ք կործակ մեր ամէնէն՝ պաղ գրողներուն ամէնէն՝ պաղած ապուր յողմածները:

Դանելու համար մեծ դժուարութիւն չէք քաշեր անշուշտ:

ԳԱՆՆԱԲՈՒ ՊԻՏԻ ԳՐԵՄ

ԻՆՉ ԿԸ ԽՕՍԻՆ ԻՄ ՄԱՍԻՍ

ԵՐՈՒԱՆԴ ԹՕԼԱՅԵԱՆ

Ստացանք հանրաձայնօթ Յ. Դըլլըճճեան գրատունէ՝ 1. — ՈՍԿԵՂԷՆ ԴՊՐՈՒԹԻՒՆ, գործ՝ Միհրան Էմ. Թապագեանի: 2. ՀԱԻԱՔԱԾՈՅ ՀՐԱՀԱՆԳԻՉ ԵՒ ԶՈՒԱՐՃԱԼԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ, գործ՝ Ս. Պօլուպէյ, եանի: Դին 5 շաբաթ: 3. — ԴՐԱՄԱԿԱՆ ՅՈՒՅԱԿՆԵՐ՝ հաղթ. 2 շաբաթ: Ասոնց կեդրոնատեղին է վերջի չեալ Դրատունը, Չաղմաղճըլար:

ԴՐԱՍԵՐ

ՉԵՄ ՀԱՍԿՆԱՐ...

Փառահեղ սանար մը կանգներ են մարդիկ: Իրենց հոգիներուն յաւիտեականութեանը աղօթարանը, իրենց մեղքի բուրերուն համարատուութեանը վայրը եւ իրենց հաւատքին կուռ օրրանը դաւանեք եւ նուիրագործեք են զայն: Ու յաջորդաբար ճանչցեք ու պատեք են այդ եկեղեցիին պատգամները: օծեք են անոր՝ մատեններուն հիւրքն ու նիւքը ու քաղցր են անոր հաւատալիքները:

Յոյս եւ սէր հիւսեք են վեհաշունչ կրօնքին բոլոր տաճարաւորութիւններուն շուրջը ու վերի բայասանը՝ հոգիին ըղձակներուն յագուրդը հոնկէ՝ սպասեք են ջերմեւանդօրէն:

Աստուածութեան ճառագայթող դիմքը: ճոյն ինքն այդ սրբանուէր սանարին մէջ կերպարանաւորեք են եւ հոն՝ այդ խորհուրդներու զեղութեանը մէջ փառաբանութեան տաղիւ երգեք են ու կ'երգեն դեռ մօտաքի վերաբերումով մը պիտի:

Հոն՝ այդ կրօնքի սանարին մէջ, ո՛ւր Քրիստոսի պատմական կեանքը յարութեան փայլովը ճոյն ինքն մահուան սանտուղը արհամարհեալ այնքան ուժգնօրէն, ամեն ասեմէ ակեք կը տեսնուի ու մեծադրող հանդեսներով կը խայտաւանեցնուի քրիստոնէայները:

Յաւիտեական կեանքը իր բազմաձեւ դրուատիւններով կը խօսուի կը խոսացուի հաւատաւոր ամբոյսին կրօնքի լրջադէմ քաղցիչներէն: Ու այդ գեղեցիկ ու սրապնդող հաւատալիքը այդ նուիրականացած ապահովութիւնը կը կառնեն քեզ ալիս արմատ բռնած է բոլոր ջերմեւանդ հոգիներուն մէջ ուրիշ միջոցաւ կը ծորի, տառապանքի մեղմացում կը կաթէ, բոլոր ցաւաւանջ սգաւորներու սրտին մէջ ...:

Եւ սակայն ...:

Եւ սակայն, սեւ սեւ սեւ ցրտահեղներով եզերուած մահազոհներ իմացունէ, կը գրաւեն ուշադրութիւնս, որոնք ամեն ասեմէ հոս ու հոն կը սեւագրեն կորուստ անձի մը: սիրելիի մը, կողակցի մը, ըլլայ պատերուն վրայ ըլլայ եկեղեցիներուն դռան ճակատի վրայ, եւ որոնք կը գուժեն մահ մը, միշտ ճոյն լայազին արտայայտութիւններով քաղցմանելով այդ բաժանումը իբրեւ — բօքալի ... աղետալի, դառնագին ... կսկծալի ... անդամաւնելի կորուստ ... դառնալիք ... եւլն:

Չեմ հասկնալ:

ՌԱՏԻՈՆԻԷ

ՀԻՆԵՐԷՆ

Թե ի՛նչպես կը գրեին հին զաւեցագիրները ասկէ 25 տարի առաջ: Ահա՛ եջ մը զոր կը բանանք այսօր Հանրագիտակի սիւնակներուն մէջ: Եւ իբր անդրանիկ էջ՝ կը ներկայացնենք Մադիկի սրամիտ արտօնասիրող Անսօն ԷՅ. Սագայեանի գրած մէկ երգիծական հասուածք, զոր յատկապէս լեզի համար պատաստած է: Անսօն Սագայեան կը պատկանի հին զաւեցագիրներու սերունդին եւ անոնց վերջին մնացորդն է: Ժամանակին հրատարակած է Միմոսը, որուն աւխասակցած է զիսաւորաբար: Հետեւաբար Անսօն ԷՅ-ի Սագայեան իրաւունք ունի բողոքելու Երուանդ Թօլայեանի դէմ, երբ այս վերջինը կ'ելլէ կորզել Միմոս մակդիրը, որ իրեն սեփականութիւնն է 25 տարիներէ ի վեր, տարի՛ք մը որ Կավուօսին տարիքը չէ դեռ:

Ի՛ՆՁ ԱՂԷԿ Կ'ՈՐԼԼԱՐ, ԵԹԷ ՎԵՐՆԱՅԻՆ

Կիներու բերնէ ծխախոտը.
Միտախոտին մէջէն ... սաւանը.
Մասխի անհասկնալի պարբերութիւնները.
Հրագիրներու իրար չքաշելները.
Ամուսնութեանց մէջէն զրամօժիտը.
Դաժաճ իօի կօշիկները.
Օրիորդներու երեսի փուտոտն և չըրթունքներու կարմիրը.
Երախաններու բերնէն պիպոցը.
Էրիկ կնկան կոիւները.
Սինպօիսդ բանաստեղծները.
Խմբագիրներու մուրացկանութիւնը.
Տէրտէրներու անբեռնութիւնը.
Վարդապետներէ ոմանց խայտառակութիւնը.
Կառապաններու անքաղաքավարութիւնը.
Նոր փեսաներուն ճերմակ ձեռնոցները.
Ոտքերու նաւրճները.
Ընթերցողներու օրլախնի տեսակը.
Բաժանորդներու պաթախնի տեսակը.
Խանութպաններու նետած խաղբխները.
Շուկացիներու պաղ պաղ սրամտութիւնները.

Բասթաններուն վրայի ճանճերը.

Ճաշարաններու կերակուրներուն մէջէն տեսակ տեսակ պեփոքները:

Մեր աղջիկներուն զորովութիւնները.

Մեր երիտասարդներուն պոլսօնիէն ծաղիկը.

Կարգ մը դրողներու յօդուածները.

120 դրուչնոց գօսքիւմ-գօսքիւնները.

Սիրահարներու երգումները.

Սիրուհիներու անհերք.

Բանկալթի թեթեւօրիկները.

Հիմակուա խել մը աղջիկներուն անպարկեշտութիւնը.

Մօտ ըսուած խառախանցօլոցը.

Թերթերու մէջէն կարգ մը իմաստասիրական ու լեզուաբանական ուսումնասիրութիւնները.

Կանանց կուրծքերուն մէջէն բաժակը և քուրջերը.

Կառսօններուն խարդախութիւնը.

Օրէկներու եփքանները.

Մեր չիք մօնեհաններուն 95 դրուչնոց փողկապները.

Ոտքերուն խերը անիծող նեղ կօշիկները.

Մեր հանդէսներուն մէջէն պարապ ոտանաւորները.

Մեր դպրոցականներուն ինքնահաւանութիւնը.

Կարգ մը վարժապետներուն իմաստակութիւնը.

Դաս մը վարժուհիներուն տգիտութիւնը.

Եւ վերջապէս, աշխարհիս երեսէն անկուտիւթիւնը:

Բերա

ԱՆՏՕՆ ՍԱԳԱՅԵԱՆ

ԹԱՏՐՈՆ ԵՒ ՔՕՆՍԷՌ

Սկիւտարի եկեղեցեաց մասակարարական բացը գոցելու համար որոշուած է բաւերական ցերեկոյթ մը՝ թաւ Բերա Բրքի-Շանի բաղապետական բաւերոյնը, եւ այս առթիւ մասնախումբ մ'ալ կազմուած քաղաքի, կը յուսանք թէ եկեղեցասէր եւ կրթասէր անձինք սիրով պիտի ուզեն նիւթականապէս օժանդակել սոյն բաւերական ձեռնարկին, որուն արդիւնքը միայն պիտի կրնայ ալ աւելի բարձր պահել եկեղեցական պայծառութիւնը: Մանրամասնութիւնք յաջորդ քիւով:

ԺԱՄԱՆՑԻ ԽՕՍՔԵՐ

Արդէն իսկ վերնագիրէս կը հասկցուի թէ՛ վայրայիշեալի (նոր բառ) խօսքերը ապահովաբար լեցուն խօսքեր մը չեն կրնար ըլլալ, քանի որ անոնք միայն ժամանցի համար գրուած են, և չէ՛ մի որ ընդհանրապէս պարապ խօսքեր են որ ժամանցի խօսքեր կրլան, սակայն կը խնդրեմ յարգելի ընթերցողներէս որ ասկէ չը հետեւցնեն թէ՛ քանի որ պարապ խօսքերը՝ պարապ մարդերը կընեն, հետեւաբար ես ալ պարապ մարդ մ'եմ: Ո՛հ, հաւատացէ՛ք թէ՛ այս տեսակ հետեւութիւն մը արժանապատուութիւնս սաստադոյն պիտի վիրաւորէ այն աստիճան որ՝ անձնասպան ըլլալէ ուրիշ միտիթարական բան մը չը պիտի գտնեմ, ու նկատելով որ քաջութիւնը չի պիտի ունենամ զայն օրը օրին գործադրելու, հետեւաբար պիտի որոշեմ ամէն իրիկունս սովորական կտաւ կրկնապատկել՝ տակաւ առ տակաւ, ու անդգալիօրէն անձնասպան եղած ըլլալու համար, քանի որ գիտութիւնը հաստատած է թէ՛ օղի շատ գործածողները ինքզինքնին կապանեն, և թէ՛ այս տեսակ անձնասպանութիւն մը մէկ քահանայով անչեքօրէն թաղուելու անպատեհութիւնն ալ չունի: Արդ քանի որ որոշուած յայտնեցի, վստահ եմ որ անշուշտ չէ՛ք բաղձար զայն իրագործել տալ ինձ, ի նկատ առնելով նաեւ թէ՛ կտային կուտն ալ քովի վրայ կը վճարեմ:

×

Ամէն թաղ՝ իր եկեղեցին ունի, և ամէն եկեղեցի՝ իր Թաղ-Խորհուրդը, ամէն մարդ ալ գիտէ թէ Թաղ. Խորհրդոյ պարտականութիւնն է թաղին կրթական ու եկեղեցական գործերուն հոգ տանիլ ու զանոնք արդիւնաւորել, մի եւ նոյն ատեն հոգալով ու խընամելով նաեւ թաղին տնտես աղքատները, որոնց համար «տնտես Աղքատաց» անունով գանձանակ մը Քրիստոսի ժամանակէն ի վեր գոյութիւն ունի, ինչպէս նաեւ ամէն անգամ յանուն տնտես աղքատաց եկեղեցւոյ մէջ պընակ մը պտըտցնելը՝ պատմական ժամանակներէ ի վեր սովորութիւն եղած է:

Սակայն քանի որ կրթական գործը որ ամէնէն շատ հոգածութեան կը կարօտի, և

որուն մէջ եղած պղտիկ զանցառութիւն մը շատ բան կարծէ, հետեւաբար որոշուած է այդ հոգը մասամբ բաժնաւոր համար՝ Թաղին ուսեալ ու կիրթ անհատներէն Օժանդակ մարմին մը կազմել Հոգաբարձութիւն անունով, որ կաշակցի կրթական ու բարոյական տեսակետով, Թաղ. Խորհրդոյ թողովով միշտ նիւթականին հոգը: Մինչեւ հոս կը հասկընամ ու կը խոստովանիմ թէ՛ խիստ օրինաւոր ու անհրաժեշտ է այսպիսի օժանդակ մարմնոյ մը կազմութիւնը, բայց երբեք չեմ հասկնար այն մարմինը՝ որ կը բաղկանայ կարգ մը հազուապէս ու թաղականաբաղձ ճանճիւնիճիւնճօս միւսիւններէ, որ կը կոչուի՝ կրթական յարկին օժանդակ մարմինն օժանդակ մասնախումբը, որոնք խելքերնին հասնի թէ չէ՛ ամէն կրթական գործի մէջ քիթերնին կը խոթեն, և շատ անգամ ալ Հոգաբարձութեան որոշումները կը քննադատեն, և նոյն իսկ Թաղ. Խորհրդոյ վրայ կուգեն աղքեցիկ դիրք մը ունենալ, իրրեւ թէ իրենց շնորհիւ միայն թաղականը թաղական ու դպրոցը դպրոց կրնայ ըլլալ: Ըսէ՛ք կաղաչեմ, այս տեսակ մարմնոյ մը գոյութիւնը չէ՛ մի որ կրթական գործը կը խաթարէ, աւելի լաւ չըլլա՞ր որ կրթական նաւը թողունք մէկ նաւապետով, և այս օժանդակ մարմինը անուանենք «կրթասէր անդամը գանձանակաչլարերութեան», արգիւելով զանոնք միջամտելու դպրոցական ու եւ կարգադրութեանց, քանի որ տակաւին անփորձ են ու կրնան փորձանքի հանդիպիլ, և կամ փորձանք ըլլալ, և երբ առարկէ՛ք թէ՛ այս ըսածներս պարապ խօսքեր են, հոգ չէ թող ձեր խօսքը ըլլայ:

ՌՈՄԱՆՈՍ

ՆԱՄԱԿԱՏՈՒՓ

Տրապիզոն, Տ. Պ. էֆ. — Ստացանք 5, 70 ֆր.:

Պանսրմա. — Հաճեցէ՛ք փութացնել:

Դամասկոս. — Ստացանք ձեր վեցամսեայն:

Նոյնպէս խնդրելով կը խնդրենք մեր այն Պատ. բաժանորդներէն որոնց հասցէին բաժնեգնի նորոգման մասին գրած էինք, որպէս զի հաճին օր առաջ հասցնել մեզ իրենց նորոգ բաժնեգինները, հաշիւներու և տօմարի ճշդութեան համար:

ՄԱՏԱՄ ՏԵՔԹԼԹԷ

[ԱՍՏԱՌՈՒԱՆ ՅՕԴՈՒԱՄ]

Ալփիար՝ մեր սրամիտ երգիծաբան-ֆանթազիսթը, որ հիմա գործով կամ գործողութեան համար աշխարհիս է՛ն տաք պչրուհիին՝ Բարիզի ծոցը կը գտնուի, անցեալ օր իր մէկ յօդուածին նիւթ ըրած էր Բարիզի-էններու է՛ն վերջին նորաձեւութիւնը՝ directoire չըջագգեստը:

Directoire՝ ըստ Ալփիարի գրչին կամալքին, տեսակ վը քօթիւմ է եղեր, որուն ժիւլէին քովտի ճեղքէն՝ պուտտաներու մէջ, եպնին մարմար սիւները կերելին... առանց սինէմաթօկոսֆի, այլ պարզ աչօք տեսանելի:

Բարիզի-էն, որ նորութեան համար աւելն ինչ կուտայ y compris հրգին, կերելի թէ, փոխանակ զարգանալու և յաղաղդիմելու՝ ես կերթայ կոր աստիճանաբար, թերեւս մինչեւ Եդէմ, հետեւելու համար առաջին կնկան քօթիւմին...

Վաղը Directoire քօթիւմները պիտի ընդհանրանան, հախ հոն՝ oiseaux-de nuitները պիտի փորձեն, յետոյ՝ առթիւսները, վերջը couturièresները, և օր մըն ալ պիտի տեսնեալ թէ Մարեոնքա տուտուին աղջիկն ալ հագեր է, ինչպէս նաեւ կար կարող Հոռոփին մաքինանին:

Մակայն գիտցէք որ աղմկայոյզ այդ նուագօթէն նոր բան մը չէ մեղ համար, քանի որ Բերուզ, Շամիրամ և Մինեօն վերփինի, երբ քանթօի կելլան այս կամ այն թատրոնին մէջ, հագածնին ուրիշ բան չէ՝ բայց եթէ directoire, քանի որ ես դուռն սա... տա... նան կրնանք լայնելը սօյէն քանիք ընել, ժիւլերու ճեղքերէն ներս կանգուն մանկ սիւններուն՝ քանի մատնաչափ տրամագիծ ունենալը եւայլն:

Ուրեմն՝ ասկէ կրնանք հետեւցնել թէ՛ եղածը պարզ շառլաթանութիւն մէ՛կ կար կարողներու քոխլը... հացի խնդիր:

Բանի, որ անքօլթէին վրայօք է մեր ասացուածը, ուստի եթէ խօսք կուտաք թէ

երբէք չպիտի գայթակղիք յետագայ տողերէն, քիչ մը զձեզ զովացնեմ, նկարագրելով այն քրքջալիր պատկերը, որով պիտի կրնանք գաղափար կազմել թէ, միմոտիս և լրջախոհ ամուսին մը ինչպէս կը վերաբերուի իր մօնտէն կնոջը հետ, որուն առաջին և է՛ն նկատելի փափաքն է օրուան նորոյթին հետեւիլ, ալ լա մօս հագուիլ և բնաւ կարելի որութիւն չտալ ամուսնոյն դիտողութիւններուն:

Գիւղը՝ հըր կանցնի տեսարանը, ամառահոցն է այն Հայ-Լայֆ դասակարգին, որոնք օդերուն տաքնալուն չեն սպասէր կեօջ ընելու համար, ոչ ալ իրենց պիլանչօֆն վնաս մը կուտան գեղ երթալով, այլ՝ օրը օրին չէքրկէներու պէս թիթեւ, դուրս կը ցատկեն տունէն, գեղին moubles տունը բաղմուտ համար:

Բարթիկ աղա, թէեւ միջակ դասակարգի անհատ, սակայն կնոջը չիրին երեւնալու համար այս տարի այդ գիւղը եկած տունը բռնած էր:

Կիրակի իրիկուան դէմ, ըստ տեղացի սովորութեան դուրս ելլալու կաղմ ու պատրաստ, գաւազանը մէկ ձեռքը, բառաւորին թեւին, վարի բակը կսպասէր, որպէս զի Տիկինը... հաճի իր սենեակէն իջնել, ընկերանալու համար իրեն:

Քիչ վերջը Լուի Բեք թալօններու միօրինակ ու թեթեւ ձայնը լսելի կըլլայ սանդուխտի վար, մինչ հեռուն այլազգ, չորս աչքով կսպասէ իրենց մեկնումին, Մարիամին հետ երկու խօսք փոխանակելու և կամ... երկու պաշիկ:

— Իշտէ ես եղայ Բարթիկ աղա... թէ՛ լաշըդ ալ քեզի մնաց, կիսէ տիկինը, մեծաքն կանքերուն կոճակները դնելով:

— Աս ինչ է, դուրս չպիտի ելլանք մատամ...

— Իշտէ կեկանք՝ կո՛ր... ամա՛ ինչ խօսք է...

— Հիշ սանքի, վրայէդ բան մը չես հա-
գեր տէ, գիտեմ քի ճայմիշ եղար ...

— Տէր ողորմեայ ... եօղանք փառ-
տուելու չէի, իշտէ պուզ մը, տահա ...

— Ատոր վրայէն բան մը չիգա ...

— Աման Բարթիկ աղա՛, տահա եօղի չե-
կա՛ր, ան տէրտ կընեմ կոր, մարդու քով ալ
ընես նէ վրադ պիտի խնդան ...

— Կէօքսըդ ...

— Իշտէ ասանկ ...

— Թեւեթըդ ...

— Իշտէ բաց, ասանկ, ի՞նչ կայ ...

— Կոնակըդ ...

— Կէս մը բաց, հիմակուան մօտաներէն
իշտէ ...

— Սըտեղէն կէճէլիկս բեր, կըսէ Բար-
թիկ աղա՛, ետ ալ հանուիմ, ճայմիշ եղայ,
նայէ դուն աղէկ խելք ես ըրեր, հանուէր
թափուեր ես ...

— Խելքիդ եկաւ Բարթիկ աղա ... աս
ամէն դուրս ելլալուն բերանըդ բանաս պի-
տի ... չօգ չէ՛յ ...

— Կսի՛կ, հայտէ ես բերանս մինակ կը
բանամ կոր, դո՛ւն ... վրադ գոց տեղ մը
չեմ տեսնար կոր քի ...

— Եա ի՞նչ կուզէիր, Սկիւտարցիի պէս
վերէն վար գոց՝ ճուվալը մտնամ ... Ինէ
էվէլ քու վրադ կը խնդան քի ի՞նչ կուս-
տօսըզ կնիկ ունի տէյի, աս գեղը նստողը
նայմիշ պիտի ըլլայ ...

— Ուշմիշ ըլլալու համար վաթսուն օսկի
սուլամիշ ըրինք, չէնէ մի հավաթէպտիլի
պէրի, ան հանկնաք ... կնիկ, ես ատ պի-
չիմը համամ խախընիլի հետ բիացան չեմ
կրնար կոր պտըտիլ ... վրայէդ գոց բան
մը հագի ... ալթըխ կոգտէ ...

— Ի՞նչ կըսես կոր Բարթիկ աղա՛ ... աս
էրիկ մարդու գիտնալիք բան է կնկան հա-
գուստը, մօտան, պիչիմը ... չօգ չէ՛յ ...
մէկ վրայիս կը խառնուէի կոր ատ բանն ալ
ձեռքէս առ թամամ ըլլայ ...

— Կնիկ, կը նայիմ կոր քի, էկէր չի խօ-
սելու ըլլամ նէ, վարտիքով շապիկով սօխախ
պիտի ինաք ալթըխ, մօտա ըսելը նամուս-
տըզութին ըսել է անապ քի ես չեմ հաս-
կընար կոր ...

— Հայտէ՛, հայտէ՛, քու խելքդ չի հաս-

նիր ասանկ բաներու, ես հանածս ալ գիտեմ
հագնելիքս ալ, հիմա դուրս ելլանք տէ նայէ
քի ինէ բացերը կը տեսնամ չէնէ չէ ...

— Պաղնիք ալ երթալու ըլլանք նէ չըպ
չըպլախներ ալ կը տեսնաք, ամա մենք տէ-
նիզ պանեօսին երթալու չենք, բիացան մար-
դու մէջ պիտի մտնանք ...

Վերջապէս քիչ մ'ալ այր Ե Ըին կառնեն
կուտան, և ինչպէս ամէն ատեն և ամէն
պարագայի մէջ, խեղճ մարդամեքենան տե-
ղի կուտայ և երկուքը մէկ փողոց կիյնան,
մինչ իրենց ետին՝ այվազը Մարեամը կան-
չելով,

— Եկուր քա Մարեամ, մանտամայիդ
սիւսը նայէ, չըպլախ ի տէյու էղվէօր մի
չէխեց աղաս ...

— Բէք ալ ըռինտ հէխ ունէ մարդը,
հըպա ի՞նչ, չէօրսղին բաց սօխախ կէլլուվէ՛
հէչ ... մա՛րը ...

— Սանքի մեր մանտաման էղուոր կնիյ
է քա ...

— Կուստօ չունէս ծէօ ... օր ես հագ-
նելու ըլլամ էդ սիւսիլ ֆիստանները, օր
չիլլիս բանալու ըլլամ, քընց մանտաման
չեմ արժէր ...

— Ինծի համար ընկէ էվէլ էվէլօք ես
քա Մարեամ, ես պիւռայից չուչէները պաղ
ջուր նիմ դրէ, եկ օր մուհապէթ անէնք ...

— Հայտէ ծօ խենդ չուն, անոր համար
քի երէկ գիշեր տօնսուրմա առ ըսի տէ,
բարայ չունիմ ըսիր ...

— Աչիյիդ լէօսը կըռծիմ, ես քեզ բարա
էլ կուտամ, հէլվա էլ կօխիմ ...

Թողունք որ սպասաւոր սպասուհի օգ-
տուելով իրենց մեծերուն բացակայութենէն
համով tête à tête մը ընեն, մենք հետեւինք
Բարթիկ աղային, որ հիմա հասած է գա-
ղինօն:

Ընդարձակ գետին մը ծովեզերք, ուր ա-
մէն կին իր նորը բերած ցուցադրած է, և
ամէն այր իր քսակը:

Ընդհանուր սալօն մը երեւակայեցէք,
ուր եկած բազմած են ձեռքը բերնին հաս-
նողները. տարեցները Բագոսը ու ստաքողը,
իսկ երիտասարդները՝ հարուստն ու քօքօ-
ղը ... անոր ասոր թաքողը:

— Ե՛...դ, ո՛ւր կերկնաս կոր ...

պարէ սանկ ծարիկ մը նստինք քի էլ արեմին
սէյր չըլլանք, կըսէ Բարթիկ աղա արթող
մը բռնելով պարապ սեղանի մը մօտ, մինչ
տիկինը, կռահելով թէ ամէն աչք իր վրան
թառած է, կոտորուելով կանցնի կը նստի
ճիշդ միջտեղը, հէլալ ընելու համար Շրիկէլի
տուած երեք ոսկին պարզ պլուզին համար,
որուն առաւելութիւնը ... տէքօլթէ ըլլա-
լըն է:

Բարթիկ աղա, հեռուն մնալուն չի կըր-
նալով պօռալ, ակռաները (որոնք կեղծ էին)
կոկորդիլոսի կլաբին պէս իրար կը զարնէ և
կուգայ կը նստի:

— Բա ... ի՞նչ ... տէյթ ... հոս ...
եկա՛ր ... կետինին ... տիպը ... կասնիմ
կոր ... կըսէ չըթունքները չի խաղցնելու
աստիճան սեղմելով ձայնը:

— Հապա ո՛ւր պիտի նստէինք, չը գիտ-
ցայ քի շունի եավուրի պէս կանանչներուն
տիպը պիտի մտնայի ...

— Բա, բիւ ... թիւն ... քեզի ... կը
նային կոր ...

— Տահա աղե՛կ եա, եաղ կապէ ...

— Բա ունեցածս ալ կը հալի ... կո՛ր ...

— Էօֆ, ամա՛ն, սուս եղիր տէ մուղի-
քան մտիկ ընենք ...

— Տա բէլէսին է ինչ նալլէթ է նէ վը-
րադ առ ... միսերդ գոցէ՛ ...

— Ձեմ մսիր կոր Բարթիկ աղա, մսիմ
նէ կառնեմ ...

— Վուճուտըդ գոցուի տէյի մուռք չեմ
ընէր կոր կնի՛կ ... նամուսիս զիյան չի գայ
տէյի է ըսածս, բիւթիւն աս թառաֆ կը նային
կոր ...

— Էյ ճանը՛մ աղուոր եմ տէ հիմա կը
նային կոր տէյի զօռովէն չիքիննամ ...
չօգ չէյ ... պու տա թօհաֆ ... տահա՛ ինչ
կուզես, աղուոր կնիկ ունիս իշտէ ...

— Կնի՛կ, սուռաթիդ չե՛ն նայիր կոր,
անկէ քիչ մը վար կիչնայ կոր քէօռնալիք
աչուընին ...

Նոյն միջոցին կառսօնը կը մօտենայ և
պէտք եղած քօմանտը կը փրօւի:

— Պարէ ելիր տէ սա թառաֆս անցիր ...
հոս սիրէս է ...

— Հոս աղեկ եմ Բարթիկ աղա, նայէ
ամէնքը կրնամ կոր տեսնար ...

— Սանկ եկուր տէ կետինին տիպը ան-
ցիր, չէնէ ես պիտի ասնիմ ...

Ու հազիւ թէ բերուած պիռաները կէս
կէս թմած էին, անդիէն երկու չիք երիտա-
սարդներ լաստիկ պէպէքի պէս հորուս հո-
բուս ցատկելով կը մօտենան,

— Բարի իրիկուն տիկին ...

— Օ՛ ... Ասծու բարին, հրամանցէք ...

— Բարի իրիկուն Բարթիկ աղա ...

— Ասծու ... բարին ...,
կըսէ Բարթիկ աղան դէմքը ամառուան կե-
րակուրի պէս թթուեցնելով:

— Հաւատացէք տիկին, այս իրիկուն
ձեր թուալէթով Ֆիւռեօն կընէք կոր ...

— Մէյ մըն ալ քովինիս հարցուցէք ...

— Խոգրեմ Բարթիկ աղա, մինչեւ հիմա
գիտէինք որ ճաշակնիդ անվիճելի էր ...
բայց ի՞նչ կը լսենք ...

— Հայտէ օղլում, մէյմէկ պիռա խմեցէք
տէ պտըտկեցէք, ես ձեր տարիքն էի նէ տի-
պըս իսկէրմի չէր տեսնար ... հայտէ ...

— Հա՛, հա՛, հա՛ ... տիկինը ձգել ա-
ռանձին՝ և հեռանալ, զմեզ այդքանի պոխլթ
կը կարծէք ...

— Պաթ մըթ չիյտեմ կոր օղլում, մա-
տամը մտմտացող ունի, չնորհակալ եմ ...

— Բարթիկ աղա, կուզես նէ դուն սօ-
լաչօ մը ըրէ, ես մինակ չեմ ...

Բարթիկ աղա անանկ նայուածք մը կընէ
որ կարծես թէ տիկինը աչքերուն մէջ պիտի
առնէր:

— Ձեր այդ պլուզը, մա բառօլ, Շրիկէլ
կը բուրէ կոր տիկին, կը սխալինք արդեօք...

— Բարթիկ աղա, նայէ կուստօէ հասկը-
ցողը ինտո՛ր խաֆային կը զարնէ՛ ... այթ՛,
անոր կարածն է, բայց մեր աղան չի հաւ-
նեցաւ ...

— Ա՛ ...

— Ա՛ ... ա՛ ...

— Ա՛ ... ա՛ ... ա՛ ...

— Ի՛նչ է ան միւսիւններ, ակռաներնուդ
ցա՛ւը բռնեց ...

— Ի՛նչ կըսէք Բարթիկ աղա, այս պլու-
զա՛ն, այս հրեշտակային և հրեշտակավայել
պլուզա՛ն, ուրկէ դուրս կուգայ համակ ճա-
շակ, ս՛ի բուր ա ֆի բիֆ և երաքան...

— Ինծի կուգայ քի ալթըն սէրինցաւ...

Էվտոքի, կամաց կամաց ելանք նե գէշ չլլար ըսելով՝ մինչ Բարթիկ աղա ոտքի ելլալու պէս կընէր, յանկարծ ընտանիք մը կուգան կը նստին իրենց մօտը, որոնք թէեւ ուրիշ սեղանի մը շուրջը կը բոլորուին, սակայն որովհետեւ հեռուէն հեռու ազգականութիւն ունէին Բարթիկ աղայի հետ, կըստիպեն որպէս զի քիչ մ'ալ նստին։

— Աս մենք եկանք տէրի կերթաս կոր Բարթիկ աղա՜ ...

— Ձէ, զաթը պիտի ելլայինք, նե իսէ անէքի ըռասթ եկանք նե չէյրէկ, մը տահա կը նստինք ...

— Ազշամլար հայրը օլտուն խըսը՜մ ...

կը ձայնէ նորեկ ընտանիքին արու անդամը։

— Օ՜ ... հօշ պուլտուք ... նասըլ պալլա չըգըյօրսոն ...

— Գառտաշ քառա ալընտան վագըթ եօգ քի տէնիզէ տիւշէիմ ...

— Քա սուս եղիր սուս, կէնէ ան գիտցած թուրքուր գաբըլմազդ է, պիտեը աղ պիպէռլէնմիշ եղան տահա աշկը դուրսն է ...

Աս ալ չի մոռնանք ըսելու որ՝ Բարթիկ աղայի առած կինը գլխովին հակառակ էր իրենց գաղափարին, և ատոր համար մէջերնին պաղուծիւն մը կար, ահա ինչու, երբ ասդին իրենք իրենց կը խօսակցէին՝ տիկին Էվտօք միւսիւններուն հետ կը խօսէր անտարբեր, նորեկները լաւ մը տիկինը քննելէ զըննելէ վերջ Բարթիկ աղայի ականջն ի վար կը փսփսայ մէկը։

— Բարթիկ աղա՜ ... աս գիշերուան թէստոյին օյինձին է քովինըդ ...

— Բարթիկ աղա՜ ... պաղնիքը փլաւ տէ չպլախ դուրս քաշեցիր կնիկդ ...

— Բարթիկ աղա՜ ... ծովին պանեօէն կը դառնաք կոր ...

— Բարթիկ աղա՜ ... խասապի խանութ պացիր տէ մեսերը հետդ կը պտըտցնես կոր ...

— Բարթիկ աղա՜ ... ասկէ ելլանուդ կիպի պալօղ պիտի երթաք ...

— Ինծի մնայ նե սօլուխօ չիտակ մէզառլըխը պիտի առնեմ ... անանկ կերեւայ կոր, կըսէ Բարթիկ աղա, իրաւացի գտնելով եւ զած դիտողութիւնները։

— Քա տնայէն մարդ, քեզի ույմիշ կըլ-

լա՜յ ասանկ պաց հագուեցունելը ... խըսըմ ենք տէ անոր համար կըսեմ կոր, օլտուխձա մեզի ալ առ է ...

— Քա ճանըմ, չեմ ըսեր քի պատանքի պէս վերը վարը գոց հագնի ամա՜ ... էյ ինչ գիտնամ, աստար պացն ալ գիտես քի ...

— Քա մտիկ կընէ՞ քի ճատալօղը, հէմ ալ ինք կացած Պէյօղլու թարիֆ ըրած է քի ասանկ կարեն տէյի, չիյտես աղջիկնութանը պիլէ փորը փորը պաց կը պտըտէր տէ մարը կը դնէր կը դնէր կը դրոշմէր ...

— Էյ վայ մեղքիս, տիօր օր աշին մէօհիւրը դուրս է ձգեր քա՜ ... հի՜ ...

— Մեղքիդ տէրը ըլլամ, հաւատայ, պաղի պաղնիքը պիլէ խալապալըն ըլլա՜յ նե, սա բիւթիւնս ալ կնիկ ենք ամա, թող ըլլայ, բէշտիմալըս տիօր ծօրծակս (ծոծրակ ըսել կուղէ) կը քաշեմ քի կոցուիմ տէյի, անխըտարի կէշ կըլլամ ...

— Քա ճանըմ, մեր Բարթիկ աղան ալ բէք կապէ խախցուր պան է եղեր ալթըն, հէլէ մէյմը աշկերը դառցունէ տէ սարսմիշ մը ընէ նե, նայէ ինտոր խելքը տուն կուգայ ան բօստալին ...

— Ձեզի բան մը ըսեմ ... ես ըլլամ ճիւղին քէօստէկ մը կը գարնեմ տէ, թողտը չեմ ի տար քի դուրս պուլթկայ աս խըլըխով ...

Վերջապէս խեղճ Բարթիկ աղային ականջը այն աստիճան կը լեցնեն որ մարդը ինքզինքմէն ելած ոտքի կելլայ,

— Հայտէ՛, հայտէ՛ նայիմ, ես տահա ապրիլ կուգեմ կոր, խողը մանալու չեմ, քալէ նայինք ... կըսէ կնոջը։

— Ա՜ս ի՞նչ է, ինչո՞ւ, ինչո՞ւ պիտի ելլամ ...

— Քալէ կըսեմ կոր, չիւնքիւ քու հոս նստելովդ կաղինօճիին զիյան կըլլայ կոր ... եղած միւշտէրին կը խմէ կը խմէ քեզմով մէզէլէնմիշ կըլլայ կոր ...

— Ի՞նչ անիրաւ բան է ըրածդ, թուալէթ եմ ըրէր տէյի զրկուիմ պիտի, ինտոր կուղե՞ս, քու խըսըմներուդ պէս պօխճածի կնիկները դառնայի ...

— Էրկան լախըտը չեմ ուզեր, իշտէ ես կերթամ կոր, պիտի գաս նե եկուր, չի գաս նե՜ տունին ճամբան չես գտնար ետքը, ասանկ չըլպախ ալ դուրսը մնալու ըլլա՜մ նե,

գաթը ծանր եպիսկոպոսի կրնես գիշերուան
այադին ...

— Որչա՛փ անյարմար ամուսնութիւն ...
ըսելով երբ տիկինը տառուկա խաղցնելով ա-
թոռներուն մէջէն ճամբայ կը բանար հետե-
ւելու համար ամուսնոյն, արդէն շատոնց
միւսիւնները մեկնած էին և ասդին Բարթիկ
աղա կառսօնը կանչելով՝

— Պանա պազ նէ՛ տիր պօռճուճուզ ...

— Պի սէյ եօզ ... վերելմիս տիր ...

— Նա՛սը վերելմիս տիր ... քի՛մ վէրմիս
պէնիմ պօռճուճու ...

— Վերելմիս տիր ծանիմու ... երես պու-
յուրուն ... թիբօթիս, օռազալի ...

— Սէօլէ պազայում, քի՛մ ճէսարէթ էթ-
տիտէ, ֆամիլեամ ըլան օթուրտուղում վազըթ
պէնիմ իշկի բարամը վէրտի ... հէ՛ ...

— Նա՛, օ միւսեուլար քի օթուրտուրտուլար
իտի, օնլար վէրտիլէր ...

...
Ճամբան Բարթիկ աղա բարեկամի մը կը
հանդիպի որ կնոջը և աղջիկներուն հետ պը-
տոյտի կերթար, և որ զինքը տեսնելուն՝
մարդը վազելով քովը կուգայ,

— Գուզում Բարթիկ պղաս, ամօթ է
իրաւ քի ամա՛, մեկտեղ մեծցած ենք տէյի
կըսեմ կոր, ընտանիքս իլէ՛ ետեւէս ինկան
քի դուրս ելլանք տէյի, ես ալ չէ չի կըցայ
ըսելու, ֆախաթ փարաս նուազ է, ինծի
երկու ճերմակ տայիր տէ վաղը մաղազադ
կը բերեմ կը ձգեմ ... կըսէ կարմրելով ճեր-
մըկելով ամօթէն:

— Բարեկամ, տա՛մ, տա՛մ ամա՛, ատոր
խօլայը կայ, կնիկդ աղջիկներդ տուն տար
թող ճիտերնին թեւերնին բանան, առ անոնք
տար նստէ, կազինօն թէ քմիլ կըլլելու ըլլան
նէ հիշ էլ ճէպ ընել չեն ի տար կոր, նաֆիլէ
ինչ պարտքի տակ մոնաս ...

— Վ ... Ս ... Յ ... :

ԼԻԼԱ

ՅԱԶՈՐԴ ԹԻԻՈՎ

ԹԵՐԹԻՍ ԱՐՏՕՆԱՏԵՐ

ԱՐՄԵՆ ԼՊԻՍԻՆԱՆ

Պ. ԱՅՍԻՆՉԵԱՆԻ ԶՈՔԱՆՋԸ

Անանկ կնիկ մը մէյ մըն ալ աշխարհ չի
գար, մեղք:

Զոքանջ մըն էր, զոքանջ՝ բառին ամե-
նէն պօռացող առումովը:

Զոքանջը՝ փեսաներուն յաւիտենական ա-
լապունուկը կը կարծեն շատեր: Բայց Պ.
Այսինչեան անոնցմէ չէր, տարբեր զոքանջ
պէն էր՝ ու տարբեր մնաց մինչեւ վերջին
շունչը:

«Ասված տիւնանիս քեզի պէս փեսայ
սայ, անլըմա՛ն փեսայ» կ'ըսէր երբեմն, ու...
անլըման փեսայ մըն ալ քեզն դուրս կ'եր-
կննար ...: Զինքը տեսնողը անմիջապէս
գերեզմանափորը պիտի յիշէր ...:

Տարիքը իննսունին թեւ տուած ըլլալով
հանդերձ ... աջ թեւը չէր կրնար շարժել,
անոր համար որ, օր մը փեսին ետեւէն վա-
զած միջոցին երեսի վրայ ինկած՝ ու թեւը
կոտրած էր ...:

Ուրիշ զոքանջ-փեսաներու պէս համար-
ուելու սովորութիւնը չ'ունէին անոնք, չեմ
գիտեր ինչո՛ւ: Ամէն տարի կաղանդին պիտի
կուռէին անպատճառ, կուռ մը՝ որ հայո-
յութիւններով կ'սկսէր՝ ու աւելին կ'օրին
կոտրելովը կը վերջանար ...: Պատճառը՝
առնուած ցորենին անուշապուրցու չ'ըլլալը,
կամ Պ. Այսինչեանին իրեն ակնոցով, իսկ
աղջկանը առանց ակնոցի խայած ըլլալը ...:

Տարիները իրարու կը յաջորդէին ու մեր
տիպար զոքանջը կ'իյնար օրըստօրէ: Ու օր
մըն ալ անկողին կ'իյնար՝ անգամ մըն ալ
ելլելուն՝ դադարէն մէջ տեղաւորուելու հա-
մար:

... Պզտիկ մոռացութիւններ գիշերը ան-
կողինը կը խոնաւցնէին, շատ չէր անցած այդ
օրերէն երբ ... մեծ մոռացութիւններ ալ
կ'ունենար ...: Երիկ կնիկ իրարու երես կը
նայէին չի կրնալով բառ մը արտասանել:
«Մեռներ տէ աղատէի» կը մտածէր աղջիկը,
«Կաշին ծալէր տէ սա փիս հոտերը վերնար
տունին մէջէն» կը մըմար Պ. Այսինչեան:

Հինգ թէ վեց տարի չոր փոխած էին ա-
նոնք այս անդրաբիմեան պէպէքին՝ որ գոնէ
քի ալ չէր արտադրէր ...:

Ու վերջապէս մէկ քանի օր առաջ բարին Սատուած իր մօտ կանչեց այս անթեւ հրեշտակը: Մեծ էր սուգը տունին մէջ:

«Լուս եղաւ» մրմնեց դիմացի Թագուկ տուտուն, մինչ փեսան՝ գրիչը ձեռք կ'առնէր՝ հետագայ նորօրինակ մահազդը խմբագրելու:

«Վշտահար ու սրտաբեկ տխրութեամբ համակուած, անհուն թախիծով ու սրտի վշտամորժոք կոտորումներով առիթ լալագին ու ցաւատանջ հառաչանքներով կ'ողբամ յաւիտենական կորուստը՝ առաքինասէր զոքանջիս»

ՏԻԿԻՆ ՎԱՐԴԵՆԻ ԻՍԱՀԱԿԵԱՆԻ

Կողակից՝ Նսաւ աղա Զրկիրեանի, ու անյաջորդ յաճառ շառաւիղ, յետին մնացորդ՝ ամիրայական բարեհամբաւ ու մեծափառթում Բ. տոնմին, որ ինչպէս իւր փեսան ծեծով մեծարելու պարտաւորութեան մէջ՝ նոյնպէս և առ Ս. Եկեղեցին ունեցած սրբազան պարգեականութիւնը անթերի կատարելով աւանդեց իւր հոգին սրտի ու խղճի կատարեալ անդորրութեամբ: Ուրիշ միայն կը մնայ հիմա, անհղ, կոնծած ու կապուած Թորթէ տապալկի մը մէջ՝ ջիւղ, տակոր, պարսխալ...

Յոգարկաւորութիւնը վաղը պիտի կատարուի Բ. Եկեղեցին, ուրիշ յետոյ թաղին անգուլթ ջրանկիրները իրենց անտարբեր ու սրբաշաւ վազքով Պալըզը պիտի տանին՝ հոն ի՞նչ հոգէ անկողնին մէջ հանգչեցնելու տարաբաղդ ու ... առաքինասէր զոքանջիս ժարմինը՝ ուր արիւնկզակ որդերու կերպի տիւր ըլլայ, ափսոս, անոր չուանաթոյր ամբողջութիւնը ...»:

Դժբաղդ ու յուսակտուր փեսան՝ Ս. ԱՅԵՆԱԶԵԱՆ

Սիրքէճիէն 2, 46 անցած չ'անցած մեկնող կառախուժը՝ կընչանակէ՝ ... յուղարկաւորութեան:

Դադաղին հետեւած միջոցին թաշկինակի մէջ փաթթած սոխը երեսին աչքերուն կը մօտեցնէր: Իսկ գերեզմանը հողով ծածկուելու վայրկեանին միտքին թնդաւելու փափաք

մը յայտնեց, բայց ժամկէտ աղբարը 10 զրուշ աւելի պահանջեց ...:

... Անկեղծ փեսայ մը արդարեւ, որ փոխանակ ուրիշներու պէս հասալօզ ածականով որակելու՝ ԱՌԱՔԻՆԱՍԵՐ կը յորջորջէ իր զոքանջը, և որուն բովանդակ առաքինութիւնը եղած ըլլայ թերեւս՝ աղջիկը իրեն տուած ըլլալու բարեհաճութիւնը ...:

Առաքինութիւնը աւելին կոթին վրայ պէտք է փնտռել ...:

Բոլոր այն մայրերը՝ որոնք հասուկ աղջիկ ունին, թող կարդան ու սքանչանան, ու մինչեւ որ ասանկ անստգիւտ առաւելութիւններով օժտուած փեսայ մը չը գտնան՝ թող չը զոքանջանան ...:

ԿՈՊԷՏ ԶԷՐԵՄԵԱՆ



ՆԱՄԱԿ

Տէր Խմբագրաւոր,

Ձեր պատուական թերթին 38 թուոյն մէջ «Հայ-Լայֆ դաստիարակուհի» վերնագրով գրուած գրութիւնը դրսէ առնուած լուրի մը համաձայն գրած էի, սակայն յետոյ խնդրոյն իրազեկ ըլլալով՝ հասկցանք որ սխալ և անհիմն լուրեր էին միայն, որով կ'ստիպուինք ներկայիս հերքել այդ գրութիւնը:

Պրուսա

ԼԵՒՈՆ ՓԱՓԱՋԵԱՆ (*)

(*) Հրատարակելով հանդերձ ձեր հերքումը, անգամ մ'ընդ միշտ կուգանք գիտցնել ձեզ թէ՝ Հանրագիտակի էջերը եազարալօզար չեն, կամ այն է որ անկողմնակալութեամբ պէտք է ճշմարտիճ լուրեր տաք մեզի, և վերջէն խաբէր համար հերքելու չըստիպուիք, և կամ բնաւ չի գրէք:

Լրատուութիւնը պէտք է առողջ դատողութեամբ ըլլայ, նմանապէս խնդրոյն իրականութեան և ճշմարտութեան վրայ համոզուի լրատուն և ապա գրէ այս կամ այն թերթին: Կարեւոր թէ կրցայ հասկցնել:

Ծ. Խ.

ՇԱԲԹՈՒԱՆ ԼՈՒՐԵՐ

ԽՄԲԱԳՐԱՏՈՒՆ. — Օրուան է՛ն տաք նորոյթը՝ դպրաց դասերու կազմութեան և անոնց դպրապետութեան պաշտօններն են: Բայց քիչ մը զարմանալի չէ՞ք գտնել՝ եթէ ոչ ծիծաղելի, սա անպատեհութիւնը թէ՛ դպրապետ ընտրուածներէն ոչ ոք պարզ շարական մը գոց գիտէ... և որ պաշտօն ունի, եկեղեցական երգեցողութեանց հսկել և ի հարկին կարծիք յայտնել ներմուծուելիք փոփոխութեանց համար:

ԲԵՐԱ. — Գիւղագնացութիւնը սկսելէն ի վեր, տուներու պատուհաններէ քապլօ վիճակներն անյետացած եւ անոնց տեղ կերելին պէքօ՛ւ սուռաթլը խոֆածներ, որոնք ամէն տէրտիս վրայ՝ պատշաճութիւնը յարգելով թուալէթ ալ կընեն կոր:

ՆՈՅՆ. — Եղանակի տաքերէն գիշերնեքը չի քնացող օրիորդները հոս՝ մանաւանդ Բանկալթիի կողմերը, որոշած են պառկելէ առաջ գլուխնին պաղ ջուրի տակ բռնել: (Պսակի քիլքիչին հաժէսէն է, փոխանակ սիւթ թէլերը ճակատներնուն վազելու՝ աճի ջուրը թող վազէ. Ծ. Խ.):

ՍԿԻՏԱՐ. — Հոս Պէլէրին պարտէզը տակաւ Բրթի-Շանի մինեթիւրը եղաւ: Կարգ մը ընտանիքներ կիրակիները հող կուգան անցնել. զրոյցի մը նայելով, Միհրանիկ աղան մտազրեք է պարտէզին մէկ անկիւնը chambre de toilette մը պատրաստել փափկաճաշակ տիկիներուն եւ օրիորդներուն հաճելի ըլլալու համար: (Ծախքը կը հոգացուի անշուշտ. Ծ. Լ.):

ՆՈՅՆ. — Անցեալ իրիկուն Զիֆթիկի պարտէզը պտտկող օրիորդ մը երբ զինքը դիտող երիտասարդ աչքերուն շրթնէն երեւնալու համար չիք բէշ բռնուածքով մը կուստօ ընել ուզեց, յանկարծ ոտքը սահելով ակամայ համբուրեց այն գետինը՝ ուր անցաւ... ամօթէն: (Երանի թէ ես անցնէի... շատ մօտէն. Ծ. Լ.):

ՂԱԼԱԹԻԱ. — Մինչեւ հիմա ամէնքս ալ գիտէինք թէ ուխտաւոր կիներ Հինգշաբթի եկեղեցիէն վերջ պողաչա կուտէին, բայց ո՛վ դարմանք, անցեալ Հինգշաբթի, քիչ շատ բարեկեցիկ մայր մը իր երկու աղջիկներուն հետ տեսնուած է որ, ձեռքերին բռնած կէս քաշ պողաչան նոյն իսկ տաճարին մէջ փռուած և կերած են: (Ոչ միայն բանիւ Տեառն կեցցէ մարդ, այլ եւ հոգակաւոր պողաչաւ Ղալաթիոյ. Ծ. Լ.):

ԱԼԷՄ-ՏԱՂԻ. — Հոս գտնուողները այս վերջին անձրեւներու երեսէն սալլանկեօզ դարձան. անձրեւին՝ տուներու մէջ, իսկ արեւը ցաթելուն պէս՝ դուրս: (Յովակիմ աղան աչքը լոյս, ըսել է յաճախորդները չեն կրնար կոր պտտիլ, ուստի եւ ստամոքսներն ալ դիւրին չկրնալով մարսել կերակուրի էֆօնօին զգալի է... Ծ. Լ.):

ԲԱՐԻՉ. — Յ. Ալփիար անցեալ իրիկուն Բուռնի խաղին մասնակցելով 100 ֆր. կորսնցուց: (Խաղի մէջ կորսնցուցողը սիրոյ մէջ կը շահի կըսեն, այդ մասին ի՞նչ չափեցաւ, չէ՞ք գրեք... Ծ. Լ.):

ԳՈՒՄ-ԳԱԲՈՒ. — Տեղացի օրիորդները իրենց ամուրի կեանքին հուրքը մարելու համար, ատենէ մը ի վեր ծովեղբերայ խալաւներուն վրայ կը նստին կոր, ի՞նչ կըսես Լիլա: (Այսքան տարի իրենց կարթը ցամաքին վրայ պտտցուցին օգուտ չըրաւ, կարելի է ծովին ջուրը՝ ջուրի պէս զիրենք կառնէ կը տանի... դիմացի եզրը Ծ. Լ.):

ԳԱԼ ՇԱԲԹՈՒ

ԼԻԼԱԷ

ՃԱԹԻԿ ՃԱԹԻԿ ԶԱԽԵՇՏ ՄԸ

Արտոնաւոր ԱՐՄԷՆ ԼՈՒՍԻՆԵԱՆ

ՏՊԱԳՐ. Ե. ԱՍԱՏՈՒՐԵԱՆ

Պապը-Ալի հասէսի քիւ 52.

ՄԵԾ Վ ԱՃԱՌՈՒԱՏՈՒՆ

ԼԱՆՊՈՍԻՆԵՆԱՅ

Ստանկ, Կանանկ եւ Տղայոց
ՊԱՏՐԱՍՏ ԵՒ ԶԱՓՈՒ ՎՐԱՅ

Գ. ԷՐՄԷՆԵԱՆ եւ Ընկ.

Կ. Գոյիւ, Սուրբան Հանաւ, Թօփալեան Խան
Սոյն վաճառատունը, որ տարիներէ
ի վեր իր ուղղութեամբ, ապրանաց
տոկոսութեամբ եւ գիներու անմրցելի
աժանութեամբը շահած է բոլոր իրեն
գիմը յաճախորդաց վստահութիւնը,
այս անգամ ձմեռուան յատուկ ընտիր
հագուստներու, կանանց բնորոշներու
եւ տղայոց չիք եւ գիմացկուն ֆաբրի-
ներու ճոխ միջերը մը պատրաստ ունի,
որ շեքմապէս կը յանձնարարուի ամէն
անոնց, որոնք պէտք ունին ներկայ
էղանակին հագուստի եւ ուրիշ նմանո-
րինակ պիտոյից:

Սակարկութիւն չկայ, թիւը 2 զրշ. է:
Գաւառներէն յանձնարարութիւնը
փութով կը կատարուին: 50—37



ԱՌԻԹԵՆ

[ՕԳՏՈՒԵՑԷՐ

ՓՈՒԹԱՑԷՐ] ԳՆԵԼ

Կ. ԵԱՎՐՈՒԵԱՆ

Յ. ԻՍՏԱՆԻԼԵԱՆԷ

[Ճեղք պէջ Խանիկ
Տակ]

Թէյի մեծ վաճառատան թէյերը,
որք ուղղակի ներածուելով Սեյլանէ,
Ջինասսանէ, Հնդկաստանէ, Ճապոն եւ Ճա-
բոնէ:

Ամենէն դժուարահասներն իսկ կըր-
նան գոհանալ թէյերու թարմութեամբ
հոտովը ու համովը:

Փնտռեցէք մանաւանդ իրենց յա-
տուկ խառնուրդները, որք կը ծախ-
ուին մեծ եւ փոքր քանակութեամբ:

Ուշադրութիւն մարտային:

ՀԱՆՐԱԳԻՏԱԿ

ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ԵՄԲԱԹԱԹԵՐԹ

16 ՄԵԾԱԴԻՐ ԷՋԵՐՈՎ ԵՒ ՃՈՒ ՊԱՏԿԵՐՆԵՐՈՎ ՀԱՄԵՄՈՒԱՄ

Կ. Պոլսոյ համար արեւելան բաժնեգիր	50 դր.	Վեցամսեայ	25 դր.
Գաւառաց համար	»	»	27 »
Արսասմանա	»	»	6 Ֆր.

Կ Ա Ն Խ Ի Կ

ՀԱՍՏԷ՛

ՊԱՆԱՆ ՓԱՓԱՋԵԱՆ, Պապը-Ալի հասսկի Ասասուրեան տպարան քիւ 52.

Գաւառներու մէջ գործակալներ կը փնտռուի, պայմանաւ որ երաշխաւոր մը ցոյց տան
թէ միշտ նոր բաժանորդներու անունին եւ հասցէին կցեն նաեւ բաժնեգիրները:

Դրամները պէտք է ղրկուին կամ Օսմ. Մանսարաթով եւ կամ բօսթայի փուլով 20 Կոն-
20 դրուչի հաշւով:

ՄԵԾ ԿԱԶՄԱՏՈՒՆ ՀԵՐԵԹԻԿ ՊՅՅԱՋԵԱՆ

Կ. Պոլիս, Պոստը-Ալի Գազետի քի 50

Սոյն առաջնակարգ կազմատունը որ
մօտ երեսուն տարուան հաստատութիւն
մըն է, իր գեղեցիկ գործերովը, մաք-
րութեամբը և արագութեամբը արդէն
մեծ համբաւ չանած և գրաւած է վրո-
տահութիւնը ամէն անոնց որոնք փոր-
ձով հաստատած են այս առաւելու-
թիւնները:

Հերթիկ էջ. Պոյանեան այս ան-
գամ Եւրոպայէն շերի տուած ըլլալով
արհեստին կատարելագործեալ կարգ մը
մեքենաներ, այսօր ի վիճակի է մրցիլ
մայրաքաղաքի րոյսը կողմարարներու
արտադրած գործերուն հետ:

Անգամ մը փորձելը բռնական է:

ԳԱՌՆԻԿ ՔԵԹԺՇԵԱՆ

ՆՈՐ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

Կ. Պոլիս Հաճօ-Բուլօ Խան Իր 2

Նախ փորձառուները, յետոյ խաբ-
ուողները միայն գիտեն էթ ո՛րչափ
գոյաւար է, որոնք ու գնել ապրանք-
ներ՝ որոնք թէ տոկուն ըլլան՝ թէ ճա-
շակաւոր և թէ . . . աժան:

Գառնիկ Քէշիշեան վաճառատունը
թահափէի էն առաջնակարգ Եւրոպա-
կան գործարաններէն բերել տուած է
տեսակ տեսակ կանանց և արանց յա-
տուկ Ֆանելաներ, գուլպաներ, քաշիկեակ-
ներ, ձեռնոցներ, փողկապներ, բրդեղեններ,
Ֆիլիֆօն և խիստ ճաշակաւոր ներգնաւապիկ-
ներ, գլխու օւարեր, քաշ ֆոսֆէներ և շն. և շն.

Ձերմապէս կը յանձրարենք անգամ
մը այցելել այդ վաճառատունը, ուրկէ
անպատճառ գոհ մնացողներ միշտ հոն
գիմելով պիտի հաւատան թէ՛ զիմե-
րու ամանութեան, ճեսակի ազնուութեան և
ապրանաց տոկունութեան երեք առաւել-
ութիւնները ուրիշ ո՛ր և է տեղ կարելի
չէ գտնել: